Ա. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 1914—1918 ԹԹ. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Ցարական կառավարության արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը եղել է Միջին ու Մերձավոր արևելքում տարվող քաղաքականությունը։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Մերձավոր ու Միջին արևելքի երկրների և Ռուսաստանի փոխհարաբերությունների ու կառավարության քաղաքականության մշակմանն ակտիվ կերպով մասնակցում էր նաև Կովկասի փոխարքան։ 1905 թ. հետո Նիկոլայ II-ը հատուկ հրովարտակով զգալիորեն ընդլայնեց Կովկասի փոխարքայի լիազորությունները ու իրավունքները վարչական, տնտեսական և ռազմական հարցերի ընագավառում[1]։ Փոխարքայի տնօրինությանն էր հանձնված Թիֆլիսի, Քութայիսի, Սլիզավետպոլի, Երևանի, Բաքվի և սևծովյան նահանգները, Թերեքի, Կուբանի, Դաղստանի, Ղարսի և Բաթումի մարզերը, Զաքաթալայի ու Սուխումի օկրուգները։ Փոխարքան ուներ երկու հիմնական օղնականներ՝ քաղաքացիական գործերի և ռազմական գծով։ Փոխարքային կից գործում էր բարձրաստիճան պաշտոնյաներից կազմված խորհուրդը (խորհրդակցական իրավունքով), իսկ ընթացիկ ղեկավարությունն իրականացնում էր իր դրասենյակի միջոցով։ Դրասենյակի ամենաազդեցիկ բաժիններից մեկը հատուկ բաժինն էր։ Վերջինս իրականացնում էր ոստիկանական, հետախուզական ֆունկցիաներ և իր օրգաններն ու գործակալներն ուներ բոլոր նահանգներում, մարզերում, օկրուգներում, գավառներում, քաղաքներում, ինչպես նաև սահմանակից պետություններում։

Հետաքրքիրն այն է, որ Կովկասի փոխարքան իր հատուկ տեղակալն ուներ Պետրոգրադում, որը Կովկասին վերաբերող բոլոր գործերով մշտապես շփման ու բանակցությունների մեջ էր մտնում պետական կառավարման կենտրոնական օրգանների հետ։ Նա ենթարկվում էր փոխարքային և առանց վերջինիս լիազորության իրավունք չուներ սկզբունքային նշանակություն ունեցող հարցերի մասին որոշումներ ընդունել։ Պատերազմի նախօրյակին այդ պաշտոնը վարում էր պետական խորհրդի անդամ սենատոր Նիկոլսկին։ Ինքը՝ փոխարքան նույնպես պետական խորհրդի անդամ էր։

Մյուս կարևոր բաժինը, որ գործում էր փոխարքային կից, դա արտաքին գործերի մինիստրության ներկայացուցչությունն էր։ Հաշվի առնելով կայսրության ընդարձակությունը, Կովկասի սահմանակից լինելը Թուրքիային ու Պարսկաստանին և վերջինների վճռական դերը Մերձավոր արևելքի երկրների քաղաքական-ռազմական կյանքում, ցարը և նրա պետական կենտրոնական ղեկավար շրջանները լուրջ պարտականություններ էին դրել Կովկասյան փո-

[1] Ерошкин Н. П., История государственных учреждений России до Великой октябрьской революции, Москва, 1958, стр. 53—56.

խարքայության վրա՝ ինֆորմացիայի կենտրոնացման և համապատասխան միջոցառումների ու առաջարկների մշակման ասպարեզում։

1905 թ. Կովկասի փոխարքա է նշանակվում արքունիքի մինիստր դուքս, գեներալ Վորոնցով-Դաշկովը։ Վերջինս եկել էր փոխարինելու Գալիցինին, որն իր դաժանություններով, բիրտ մեծապետական շովինիստական քաղաքականությամբ անփառունակ անուն էր վաստակել կովկասյան ժողովուրդների և հատկապես հայերի շրջանում։ Վորոնցով-Դաշկովը ցարի հավատարիմ և նրան անսահման նվիրված, ռազմական բուռն իրադարձություններում և արքունի խժդժություններում մեծ փորձ ձեռք բերած պետական գործիչներից էր, օժտված դիվանագիտական և քաղաքական նուրբ հոտառությամբ։ Նա Կովկասի փոխարքա մնաց մինչև 1915 թ. օգոստոսը, երբ Նիկոլայ II-ը, իր ձեռքը վերցնելով երկրի զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոնը, Նիկոլայ Նիկոլաևիչ Ռոմանովին նշանակեց Կովկասի փոխարքա։ Այսպիսով, Վորոնցով-Դաշկովը Կովկասը կառավարեց 10 տարի։ Նա իրականացրեց երկրամասի հեղափոխական շարժումների ճնշումը և «հանգստության» վերականգնումը, նախապատրաստեց կովկասյան զորքերը առաջիկա համաշխարհային պատերազմին, շուրջ 10 ամիս (1914 թ. հոկտ.—1915 թ. օգոստոս) ղեկավարեց բանակն ու երկրամասը Թուրքիայի դեմ մղած պատերազմում և դրանով էլ ավարտեց իր պետական-ռազմական կարիերան։

Սույն հոդվածում կանգ կառնենք Վորոնցով-Դաշկովի պետական-ռազմական-դիվանագիտական գործունեության երկու հարցերի վրա։

1. ՌԱԶՄԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԲԵՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Հայտնի է, որ մեծ տերությունները դեռևս խաղաղ ժամանակ բազմակողմանիորեն նախապատրաստվում են պատերազմի, այն է՝ մշակում են մոբիլիզացիոն պլաններ, կատարում զինված ուժերի խմբավորումների տեղաբաշխում, փոխադրամիջոցների հարմարեցում պատերազմի ու բանակի շահերին, մատակարարման ապահովում և այլն, կառուցվում են ամրություններ, բերդեր, ելման դիրքեր և ճանապարհներ։ Սկսած XIX դարի վերջերից և XX դարի սկզբից երկաթուղային ճանապարհների կառուցումը բոլոր մեծ պետությունների արտաքին ու ներքին քաղաքականության ոլորտում գրավում էր ամենատաղնակարգ տեղերից մեկը։ Ցարական կառավարությունը բացառություն չէր կազմում։ Այն բանից հետո, երբ ավարտվեց Պետերբուրգ-Վլադիվոստոկ երկաթգծի կառուցումը, ցարական ղեկավար շրջանները մտահոգված էին նոր երկաթուղիների կառուցումով արևմուտքում և հարավում։ Գերագույն յտաբը հիմքեր ուներ անհանգստանալու, քանի որ պատերազմ հայտարարելու դեպքում Գերմանիան հնարավորություն ուներ ավելի շուտ իր զորքերը ռազմաբեմ փոխադրել, քան Ռուսաստանը։ Առավել հիմքեր կար անհանգստանալու Մերձավոր արևելքում Գերմանիայի, Ֆրանսիայի ու Անգլիայի կողմից տենդագին թափով ծավալված ստրատեգիական նշանակություն ունեցող երկաթուղային գծեր կառուցելու պլաններից։

Անհանգստանում էր նաև Վորոնցով-Դաշկովը։ Կայսրության կենտրոնական մարզերի հետ Կովկասը կապված էր միայն մեկ երկաթգծով՝ Ռոստով — Մախաչկալա—Բաքու—Թիֆլիս—Երևան։ Հնարավոր բարդությունների դեպքում, այն է՝ Պարսկաստանի կամ Թուրքիայի հետ ռազմական ընդհարում—

ների ժամանակ այդ գիծը կարող էր վտանգի ենթարկվել դրանից բխող իր ծանր հետևանքներով։

Անդրկովկասի տերիտորիայում պատերազմի նախօրյակին գործում էին հետևյալ երկաթուղային գծերը՝ Բաքու—Թիֆլիս, (կառուցվել է 1872—1883 թթ.), Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Կարս (կառուցվել է 1896—1899 թթ.), Ալեքսանդրապոլ—Երևան (կառուցվել է 1899—1901 թթ.)[2] և մի շարք այլ գծեր, գլխավորապես Արևմտյան Վրաստանում։

Պատերազմի նախօրյակին ցարական կառավարության ու գերագույն շտաբի հոգսերից մեկը Կովկասում ստրատեգիական նշանակություն ունեցող երկաթգծի կառուցումն էր. գոյություն ուներ երկու կարծիք։ Պետական խորհուրդը և անձամբ Ստոլիպինը նպատակահարմար էին գտնում նոր երկաթգիծը կառուցել Սև ծովի ափերով (Տուապսե—Սուխումի, ապա Սուխումի—Թիֆլիս)։ Կովկասի փոխարքան հիմնավորում էր Վլադիկավկազ—Թիֆլիս (ռազմավարական ճանապարհին զուգընթաց) գծի բացարձակ առավելությունը ծովափնյա գծի համեմատությամբ։ Իր փաստարկումները Վորոնցով-Դաշկովը առավել հստակությամբ ձևակերպել է 1911 թ. հունվարի 26-ին Նիկոլայ II կայսրին գրած նամակում[3]։

Իր նամակի սկզբում փոխարքան գրում է, որ 1908 թ. հոկտեմբերի 6-ին Մինիստրների կաբինետը Կովկասում Ռուսաստանի ստրատեգիական դրության բարելավման հարցը քննելու ժամանակ «սկզբունքորեն անհրաժեշտ է համարել արագորեն կառուցելու երկաթգիծ Սև ծովի ափերով»։

Նման որոշումը հիմնավորվել է նրանով, որ ծովափնյա ճանապարհը կարելի է կառուցել 5 տարում, այն ժամանակ, երբ Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի լեռնանցքով երկաթգիծ կառուցելը կտևի ոչ պակաս 10—12 տարի[4]։ Կովկասի, որպես Ռուսաստանի մերձավոր արևելյան քաղաքականության իրականացման ճանապարհին ընկած ամենահիմնական ու հարմար բազայի, ստրատեգիական դրության բարելավումը, ըստ Վորոնցով-Դաշկովի, պահանջում է առաջին հերթին կառուցել լեռնանցքային ճանապարհը և հետո՝ ծովափնյան։ Ահա փոխարքայի փաստարկումները.

1) Ռուսաստանի սևծովյան նավատորմը համեմատաբար թույլ է և պատերազմի դեպքում կովկասյան օկրուգը ստիպված պիտի լինի լրացուցիչ զորք առանձնացնել ծովափնյա երկաթգծի պահպանման համար։ Թուրքիան, իսկ առավել ևս նրա դաշնակիցները միշտ կարող են իրենց ռազմածովային նավատորմի հրետանու կրակով ոչնչացնել երկաթուղային կամուրջները, դեսանտ հանել ծովափ և «այսպիսի պայմաններում սևծովյան երկաթգծի ստրատեգիական նշանակությունը հավասարվում է զերոյի»[5]։

Հաշվի առնելով Թուրքիայի ագրեսիվ գործողությունները իրանական Ադրբեջանում, չպետք է բացառված համարել, որ Ռուսաստանի հետ ռազմական

---

2 А. Т. Сагратян, История железных дорог Закавказья (1856—1956 гг.), էջ 541—543 (ձեռագիր)։

3 Ինչպես այդ, նույնպես և մի շարք այլ կարևոր նամակներ, որ գրել է Վորոնցով-Դաշկովը կայսր Նիկոլայ II-ին, առաջին անգամ հրատարակվել են «Красный Архив»-ի 1928 թ. 1-ին (26) հատորում, էջ 96—126, իսկականները պահվում են— Центральный Госархив Октябрьской революции—высших органов государственной власти и органов государственного управления СССР. ф. 601, оп. 1, д. 1210.

4 «Красный Архив», т. I (XXVI), 1928, стр. 113.

5 «Красный Архив», указан. том, стр. 113.

ընդհարում սկսելու դեպքում նա կարող է շարժվել դեպի Անդրկովկասի խորքը, մասնավորապես Բաքու և կտրել Թիֆլիս—Բալաջար—Բեսլան գիծը, ուստի Կովկասը վտանգից փրկելու միակ ելքը լեռնանցքային երկաթգծի կառուցումն է՝ Վլադիկավկազ—Թիֆլիս[6]։

2) Լեռնանցքային ճանապարհն ավելի կարճ է, անցնում է ավելի վստահելի բնակչություն ունեցող վայրերով և շատ փոքրաթիվ ստորաբաժանումներով հնարավոր է կազմակերպել նրա պաշտպանությունը։

3) Վլադիկավկազ—Թիֆլիս երկաթգիծը մոտ 800 կիլոմետրով կկրճատի Ռուսաստանի և Անդրկովկասի միջև եղած հաղորդակցության միակ ճանապարհը և գլխավորեն կնպաստի Թուրքիայի ու Պարսկաստանի հետ Ռուսաստանի առևտրի ծավալմանը։ Այդ տեսակետից, ըստ Վորոնցով-Դաշկովի, սևծովյան երկաթգծի նշանակությունը շատ չնչին է։ Չնայած Սև ծովի ափերը հիանալի հանգստավայրեր են, սակայն, ըստ Կովկասի փոխարքայի, «նման հանգամանքը չպետք է լուրջ ուշադրության արժանանա պետական կարևոր նշանակություն ունեցող ճանապարհի կառուցման ժամանակ»[7]։

4) Մինիստրների կաբինետում հարցը քննելու ժամանակ հաշվի են առել, որ լեռնանցքային ճանապարհի կառուցման ժամանակ հարկ կլինի 20 կմ թունել փորել, որը կտևի 10—12 տարի։ Վորոնցով-Դաշկովը գտնում է, որ 1911 թ. տեխնիկայի պայմաններում այդ ժամկետը կարելի է կրճատել 6—7 տարով[8]։

5) Վերջին հաշվով լեռնանցքային ճանապարհի կառուցումն ավելի էժան կնստի, քան թե Սամտրեդիից Թիֆլիս, չնայած տվյալներ չի բերում նման թեզի հիմնավորման համար։

Իր նամակի վերջում Վորոնցով-Դաշկովը վճռականորեն նշում է, որ «անդամ ավելի լավ է 10—12 տարուց հետո ունենալ լեռնանցքային գիծը, որը կբավարարի Կովկասի բոլոր պահանջներն ու կարիքները ստրատեգիական, քաղաքական և տնտեսական տեսակետից, քան թե 5 տարուց հետո ունենալ սևծովյան ճանապարհը»[9], որը վերը նշած պահանջները չի բավարարի և կունենա չնչին նշանակություն։

Չնայած Վորոնցով-Դաշկովի ուժեղ փաստարկումներին, Պետրոգրադում նրա առաջարկությանը չընդառաջեցին։ Այս հարցում որոշակի դեր էին խաղում այնպիսի սուբյեկտիվ հանգամանքներ, ինչպես Ստոլիպինի, Սուխոմլինովի, Յանուշկևիչի և այլ ազդեցիկ գործիչների անբարյացակամ վերաբերմունքը դեպի Վորոնցով-Դաշկովի անձը։

Մերձավոր արևելքում օրըստօրե սրվող քաղաքական բարդ վիճակը ստիպում էր Կովկասի փորձառու փոխարքային մի անգամ ևս Նիկոլայ II-ի առջև վճռականորեն առաջ քաշել ստրատեգիական նշանակություն ունեցող այս հարցը, սակայն այս անգամ խոսքը արդեն վերաբերում էր ավելի մեծ նշանակություն ունեցող երկաթգծի, քան լեռնանցքայինն էր, այն է տրանս-հնդկական կամ տրանս-պարսկական գծի կառուցմանը։ Այստեղ խոսքը վերաբերում էր Սուեզի ջրանցքը կառուցող ինժեներներ Շարլ Կոտարդի և Ֆերդինանդ Լեսեպսի նախագծերին, որոնք դեռ 1878 թ. Կոստանդնուպոլսի ռուսական դեսպան Իգնատևի միջոցով միջնորդել էին ցարի առաջ կառուցելու «Կենտրոնա-

6 Նույն տեղում, էջ 114։
7 Նույն տեղում, էջ 115։
8 Նույն տեղում։
9 Նույն տեղում։

կան-Ասիական մեծ ճանապարհը», որը Եվրոպան կմիացնի Ասիայի հետ։ Ըստ նրանց հաշվարկումների, Կալեից (Լամանշի ափին) Օրենբուրգ տարածությունը կազմում էր 4430 վերստ (որն արդեն կառուցված էր), Օրենբուրգից—Սամարղանդ 2230 վերստ (որը պիտի կառուցվեր), Սամարղանդից—Ֆեշավեր՝ 1275 վերստ (նույնպես նոր պիտի կառուցվեր), Ֆեշավերից—Կալկաթա—Բոմբեյ՝ 3220 վերստ (արդեն կառուցված էր)։ Այսպիսով, Կալեից—Կալկաթա (Օրենբուրգի վրայով) 11155 վերստ է, որից 8160 վերստն արդեն կառուցված է, իսկ 3740 վերստը պիտի նոր կառուցվեր[10]։ Ալեքսանդր II կայսրը դրականորեն արձագանքեց այդ առաջարկին և որոշակի քայլերի դիմեց նախագծման աշխատանքների ուղղությամբ։ Հետագայում անհրաժեշտ համարվեց դեպի Հնդկաստանի արևմտյան սահմանը երկաթուղային գիծը կառուցել Պարսկաստանի տերիտորիայի վրայով, չնայած դրան վճռականորեն դեմ էր Անգլիան։ Ռուսական պետական դեկավար շրջաններում այդ պատկերացվում էր հետևյալ կերպ.

Ալիաթ[11]—Թեհրան—Իսպահան—Բուշիր՝ 2145 վերստ։
Ալիաթ—Թեհրան—Շիրազ—Բենդեր—Արաս՝ 2186 վերստ։
Ալիաթ—Թեհրան—Իեզդ—Քերման—Չարար՝ 2290 վերստ։

Եթե այդ իրականացվեր, Ռուսաստանը ձեռք կբերեր բացարձակ ազդեցություն Պարսկաստանում, դուրս կգար Հնդկաստանի արևմտյան սահմանը և Անգլիայի դերը կչեզոքացվեր։ Դուքս Ս. Յու. Վիտտեն կողմնակից էր այդ նախագծին։ Ըստ նրա արտահայտության՝ Պարսկաստանի հյուսիսը վաղ թե ուշ պետք է «դառնա ռուսական պետության ծայրամասերից մեկը»[12], իսկ երկաթուղու կառուցումը մեծ չափով կնպաստեր դրան։

1911 թ. փետրվարի 7-ին Վորոնցով-Դաշկովը Նիկոլայ II-ին գրած նամակում հանգամանորեն նորից կանգ է առնում տրանս-պարսկական երկաթգծի կառուցման տնտեսական, քաղաքական ու ռազմա-ստրատեգիական նշանակության վրա։ Դեռևս արքունի մինիստր եղած ժամանակ նա մոտիկից ծանոթ էր այս հարցին։ Այդ գծի պետական նշանակությունը արտահայտվում է նրանում, որ ռուսական ճանապարհները «ներգրավվում են համաշխարհային տրանզիտին և Մերձավոր արևելքում Ռուսաստանի համար գերակշռող դիրքի հաստատմանը[13]։ Նման ձեռնարկման հաջողության դեպքում Բաղդադի երկաթգծի ստրատեգիական նշանակությունը զգալիորեն կթուլանար։

Ինչ վերաբերում է տրանս-պարսկական գծի տնտեսական, առևտրական նշանակությանը, ըստ Դաշկովի, այստեղ նույնիսկ վիճելու հարկ չկա։ Վոլգայի վրայով դեպի Կասպից ծովը, ապա Պարսկաստանի հյուսիսը մեծ հեռանկարներ են բացում Ռուսաստանի առևտրի համար բուն Պարսկաստանում։

Այդ նույն նամակում Կովկասի փոխարքան կրկին անդրադառնում է լեռնանցքային երկաթգծի նախագծին և հիշեցնում ցարին, որ մի կողմից Վլադիկավկազ—Թիֆլիս, Թիֆլիս—Աստրա և մյուս կողմից, Բեսլան—Բալաչար—Աստրա կառուցվող երկաթգծերի շնորհիվ Անդրկովկասի ներքին հաղորդակցության միջոցները զգալիորեն կբարելավվեն, որը տնտեսական նշանակու-

10 М. Павлович, «Империализм и борьба за великие железнодорожные и морские пути будущего», Ленинград, 1925, стр. 122.

11 Կայարան՝ Եվլախի և Բաքվի գծի վրա։

12 Տե՛ս С. Ю. Витте, Воспоминания, т. 3, стр. 464.

13 «Красный Архив», т. I (XXVI), 1928, стр. 118.

թյունից բացի, կունենա նաև քաղաքական, ստրատեգիական նշանակություն։ Առաջին համաշխարհային պատերազմի փորձը ցույց տվեց, որ ստրատեգիական նշանակություն ունեցող երկաթուղիների կառուցման իր մտահղացումներում Վորոնցով-Դաշկովը հիմնականում ճիշտ էր։ Հայտնի է, որ հենց պատերազմի տարիներին ստիպված եղան կառուցելու Ջուլֆա—Թավրիզ (147 կմ, 1917 թ.), Սոֆյան—Շերափխանա (53 կմ, 1916 թ.), Սարիղամիշ—Էրզրում (170 կմ, 1916 թ.), Էրզրում—Մամախաթուն (100 կմ, 1916 թ.) երկաթգծերը, որոնք զգալիորեն հեշտացրին Կովկասյան բանակի մատակարարման գործը։ Հասկանալի է, թե որքան հեշտ կլիներ գեներալ Բարաթովի էքսպեդիցիոն հեծյալ կորպուսի մատակարարման և փոխադրումների հետ կապված հարցերի որոշումը 1915—1917 թթ., եթե այդ ժամանակ տրանս-պարսկական երկաթգիծը պատրաստ լիներ։

Մի շարք փաստեր խոսում են այն մասին, որ իր գործունեության ընթացքում Վորոնցով-Դաշկովը հատուկ ուշադրություն էր դարձնում առհասարակ ճանապարհաշինարարության հարցերին, շատ դեպքերում առավել կարևոր տեղամասերի համար որպես բանվորական ուժ նույնիսկ առանձնացնելով զորամասերը։

Այդ միջոցառումների պատճառն ամենից առաջ փոխարքայի անհանգստությունն էր Թուրքիայի պատերազմական նախապատրաստությունների ակտիվացման կապակցությամբ։ Ի տարբերություն որոշ պետական գործիչների, Վորոնցով-Դաշկովը համոզված էր, որ Թուրքիան Գերմանիայի հովանավորությամբ տենդագին պատրաստություններ է տեսնում և նպաստավոր վայրկյանի սպասում Ռուսաստանի վրա հարձակվելու համար։ Ռազմական թատերաբեմի ստրատեգիական նախապատրաստման կարևոր միջոցառումներից մեկը նա տեսնում էր հաղորդակցության ճանապարհների և առաջին հերթին երկաթուղային կարևոր գծերի կառուցման մեջ։ Սակայն ոչ պակաս, իսկ գուցե և վճռական նշանակություն ունեցող հարցը մնում էր Կովկասյան ռազմական օկրուգի զորքերի ուժեղացումն ու նրանց օպերատիվ-տակտիկական նախապատրաստությունները, որոնց համար ամենայն հետևողականությամբ պայքարում էր Վորոնցով-Դաշկովը։

2. ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԻ ԶԵԿՈՒՅԱՑԻՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վորոնցով-Դաշկովը զգալիորեն բարելավել էր ռազմական և դիվանագիտական հետախուզության դրվածքը իր շտաբում, և դա հնարավորություն էր տալիս նրան ճիշտ կողմնորոշվելու ռազմական շինարարության ու արտաքին քաղաքականության հարցերում։

Նրա ուշադրությունից չվրիպեց ամենից առաջ 1909—1914 թթ. Թուրքիայից ղեկավարվող պանիսլամիզմի գործակալների գործունեությունը։ Որպես քաղաքագետ նա լավ էր հասկանում, որ խոսքը վերաբերում է ոչ թե սոսկ կրոնական քարոզներին, այլ կրոնական երանգի տակ թաքնված ազրեսիվ գաղափարախոսության ինտենսիվ ծավալմանը Ռուսաստանում։ Հենց նման ճիշտ կողմնորոշման հետևանքով էր, որ նա կարողացավ ժամանակին ձեռք առնել մի շարք վճռական միջոցներ պանիսլամիզմի գործակալներին որսալու և անվնաս դարձնելու գործում։

Որ պանիսլամիզմի գործակալները լուրջ վտանգ էին ստեղծել կայսրության անվտանգության համար, երևում է 1908—1914 թթ., մասամբ էլ պատերազմի տարիներին, Կովկասում և առհասարակ ռուսական կայսրության մահմեդական ժողովրդով բնակեցված վայրերում գաղտնի կամ բացարձակ կերպով գործող Թուրքիայից կամ Պարսկաստանից ուղարկած պանիսլամական ագիտատորների, ծվարված սպաների, պետական ծառայողների, առևտրականների, ժուռնալիստների և մոլլաների հակառուսական գործունեությունից։ Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում, Երևանում, Նախիջևանում, Մախաչկալայում, Կազանում, Ղրիմում և այլուր նրանց գործակալները տարածում էին կոչեր, թերթեր, գրականություն, որոնցում քարոզվում էին ողջ մահմեդական աշխարհի ու մահմեդական ժողովուրդների միավորման անհրաժեշտությունը Ռուսաստանի ու Անգլիայի դեմ պայքարելու գործում։ Գաղտնի ոստիկանության օրգանները նրանց հարյուրներով ձերբակալում և բանտ էին նստեցնում կամ կիրառում էին վարչական ներդործունեության այլ միջոցներ։

1911 թ. սեպտեմբերի 5-ին փոխարքայության կողմից Կովկասի քաղաքական վիճակի մասին կազմած ընդհանուր զեկուցագրի մեջ Վորոնցով-Դաշկովը ու նրա օգնականները Կովկասին սպառնացող վտանգը տեսնում են ոչ թե սոցիալ-դեմոկրատական հեղափոխական շարժումների՝ այլ պանիսլամիզմի գործակալների գործունեության մեջ։ Կսահմանափակվենք միայն մեկ մեջբերումով այդ ընդարձակ զեկուցագրից. «...ընթացիկ կես տարում սկսում է իրեն զգացնել տալ քաղաքական նոր հոսանք՝ այլալգիների մեջ պանիսլամիզմի ուսմունքը։ Պանիսլամիզմի ուսմունքի ակտիվ քարոզիչների գործունեությունը Անդրկովկասի մուսուլմանական բնակչության մեջ գլխավորապես արտահայտվել է երկրամասի տարբեր վայրերը էմիսարներ ուղարկելով, որոնք շրջագայելով վաճառականների կամ Մեքքայի առաքյալների անվան տակ տեղական մուսուլմանների միջև քարոզ են կարդում հանուն մուսուլմանական աշխարհի միասնության։ Հաշվի առնելով երկրամասի մահմեդական ազգաբնակչության հսկայական քանակը, պանիսլամիզմի ուսմունքը անկասկած քաղաքական լուրջ վտանգ է ներկայացնում Ռուսաստանի համար, մանավանդ, որ նա գալիս է մեզ մոտ Թուրքիայից և սերտորեն կապված է երիտասարդ թուրքերի շարժման հաջողությունների հետ Օսմանյան կայսրության մեջ։ Ռուսաստանի նկատմամբ կրելով ագրեսիվ բնույթ, այդ ուսմունքը լայն տարածում ստանալով մեր տերիտորիայում և ռուսական մուսուլմանների համակրանքը ուղղելով Թուրքիայի կողմը, կարող է ստեղծել դժվարություններ Թուրքիայի հետ ռազմական ընդհարում սկսելու դեպքում, ավելի լուրջ դժվարություններ, քան այն, որ կրել է Ռուսաստանը Կովկասյան ճակատում 1877—1878 թթ. կամպանիայի ժամանակ Դաղստանի լեռնականների ապստամբության հետևանքով»[15]։ Զեկուցագրում հիշատակվում է մի շարք թերթերի անուններ, որոնք այս կամ այն չափով քարոզում են պանիսլամիզմ, ինչպես, օրինակ՝ «Ծնի-Խագիգատ», «Սադա», ժուռնալ «Ծնի-Փեյուզաթ», «Շեխարի Սադիֆ» և ուրիշներ[16]։ Այդ պրոպագանդայի հիմքում դրված է Մարոկկոյի,

[14] Այդ բոլորի մասին հարուստ փաստացի նյութերի ու վավերագրերի հետ կարելի է ծանոթանալ Վրացական ՍՍՀ պետական կենտրոնական արխիվի ֆ. 13, ցուց. 27, գ. գ. 1847, 3265, 3602, ֆ. 157, ց. 1, գ. գ. 1847, 211, 261, 312, ֆ. 10, ց. 1, գ. 312, ֆ. 4, գ. 57 և այլն։

[15] ЦГА Груз. ССР, ф. 13, оп. 27, д. 1847, Л-3.

[16] ЦГА Груз. ССР, ф. 157, оп. 1, д. 211, ЛА-20—21.

Թունիսի, Եգիպտոսի, Միջին Ասիայի, Հնդկաստանի, Թուրքեստանի, Դաղըստանի և Անդրկովկասի մուսուլմանաբնակ վայրերի միավորման հարցը հզոր մահմեդական կայսրության սահմաններում։

Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովը 1912 թ. պաշտոնական այցով գտնվելով Բեռլինում, ստիպված էր Վիլհելմ II կայսրին և կանցլեր Բետման-Հոլվեգին ամենայն լրջությամբ հիշեցնել, որ Գերմանիայի կողմից հովանավորվող պանիսլամիզմի գաղափարախոսությունը լուրջ վտանգ է ներկայացնում Ռուսաստանի համար։ Նիկոլայ II-ին ներկայացրած իր զեկուցագրում Սազոնովը գրում է. «Իմ զրույցի առավել հետաքրքիր մասը կայսրի հետ եղել է մտքերի փոխանակությունը պանիսլամիզմի և գերմանական ռազմածովային ուժերի զարգացման հարցերի շուրջը։ Ամենից առաջ ես ձգտել եմ նորին մեծության ուշադրությունը հրավիրել Ռուսաստանի շահերի տեսակետից վտանգավոր պանիսլամիզմի պրոպագանդայի տարածումը, որ գալիս է Կոստանդնուպոլսից...»[17]։

Սազոնովը պարզաբանում է Վիլհելմ II-ին, որ ռուսական կառավարությունն իր անհանգստությունը չէր արտահայտի, եթե պանիսլամիզմը կրեր իրոք միայն կրոնական բնույթ, սակայն նրա ագրեսիվ ուղղությունը միանգամայն ակնհայտ է։ Վիլհելմ II-ը հեգնանքով բացառում է իր կառավարության մասնակցությունն այդ գործում։ Միևնույն ժամանակ խոստանում է բարյացակամ լինել դեպի իր «բարեկամ» Նիկոլայ II-ը[18]։

Որ Սազոնովը և Վորոնցով-Դաշկովը այդ հարցերում ցուցաբերում էին ռեալիստական մոտեցում և ճիշտ կողմնորոշում, այդ փայլուն կերպով ապացուցվեց պատերազմի տարիներին, երբ 1914 թ. դեկտեմբերին. Սարիղամիշի ճակատամարտի կրիտիկական օրերին պանիսլամիստների հազարավոր կոչերը ողողեցին Անդրկովկասը, որոնք բորբոքում էին ֆանատիզմ, մութ կրքեր դեպի Ռուսաստանը և ռուսները։ «Ապստամբվեցեք, մուսուլմաննե՛ր, ապըստամբվեցեք, սպանեցեք նրանց (ռուսներին՝ գյավուրներին—Ա. Հ.), քանի որ աստված ինքն է նրանց պատժում ձեր ձեռքերով»[19],—կարդում ենք այս կոչերից մեկում։

Սույն հոդվածի նպատակից դուրս է հանգամանորեն բացահայտելու պանիսլամիզմի էությունը, նրա գործակալների գործունեության ձախողման պատճառները և առհասարակ պանիսլամիզմի վտանգը նաև մեր օրերում։ Ընդգծենք, միայն, որ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը իր քաղաքական ստրատեգիայում իրավացիորեն պանիսլամիզմը դիտում էր որպես կայսրության շահերին սպառնացող վտանգ և կանխատեսում այն լուրջ դժվարությունները, որ կարող է ստեղծվել Մերձավոր արևելքում, մասնավորապես Թուրքիայի հետ ռազմական ընդհարման մեջ մտնելու դեպքում։ Այս տեսակետից պատմականորեն արդարացվում են այն բոլոր միջոցառումները, որ գործադրվել է փոխարքայության կողմից պանիսլամիզմի դեմ մղվող պայքարում, որը և բացառել է հատուկ «5-րդ շարասյան» վտանգը 1914—1917 թթ. Կովկասյան ռազմաճակատում։

Երբ առկա են հաղթանակն ապահովող նյութատեխնիկական և քաղաքական-բարոյական գործոնները, պետական և ռազմական գործիչները իրավա-

[17] «Красный Архив», том III. 1923 г., стр. 1920.
[18] Նույն տեղում։
[19] ЦГА Груз. ССР, ф. 13, оп. 27, д. 3602, Л-110.

ցիորեն իրենց հիմնական ուշադրությունը կենտրոնացնում են բանակի մարտունակության բարձրացման վրա։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ռուսական կովկասյան զորքերի հրամանատարությունը ճիշտ է գնահատել ռազմաքաղաքական իրադրությունը, հետևապես և գործել է նպատակասլաց, զերծ մնալով լուրջ անակնկալներից։ Այդ ամենից առաջ արտահայտվել է նրանով, որ Վորոնցով-Դաշկովը սիստեմատիկ կերպով կայսրին ու գերագույն շտաբին հաղորդել է Թուրքիայի ռազմական նախապատրաստությունների մասին և համառորեն պահանջել է ուժեղացնել կովկասյան ռազմական օկրուգի զորքերի թիվն ու նրանց զինվածությունը։ Կանգ առնենք առավել կարևոր մի քանի փաստերի վրա, որոնք կհաստատեն նման գնահատականը։

1908 թ. հունվարի 5-ին Նիկոլայ II-ին գրած իր զեկուցագրում Վորոնցով-Դաշկովը հանգում է այն եզրակացության, որ տվյալ ժամանակաշրջանում Ռուսաստանին ձեռնտու չէ որևէ բարդության ստեղծումը Թուրքիայի կամ որևէ այլ տերության հետ, սակայն միևնույն ժամանակ նա չի կարող չնշել, որ Թուրքիան ինքը տենդագին պատրաստություններ է տեսնում Ռուսաստանի վրա հարձակվելու համար։ «Թուրքիայի կողմից Պարսկական տերիտորիայի պավթումը, իսկ գլխավորապես Թուրքերի արտասովոր ռազմական նախապատրաստությունները ակամայից վտանգ է ներշնչում անակնկալի չգալ[20]. մասնակի մոբիլիզացիա Էրզրումի, Վանի շրջանում գտնվող զորամասերը լրիվ համալրելու և ուժեղացնելու համար, ինչպես նաև Թուրքական 6-րդ կորպուսին տրված հրամանը Ռուսաստանի դեմ հարձակման անցնելու պատրաստակամության մասին հիմք էին տալիս Վորոնցով-Դաշկովին եզրակացնելու, որ եթե կտրուկ միջոցների չդիմել կովկասյան բանակն ուժեղացնելու ուղղությամբ, ապա կարող է կրկնվել Հեռավոր Արևելքում 1904—1905 թթ. տեղի ունեցած ողբերգությունը[21]։

Խոսելով այն մասին, որ Մինիստրների խորհուրդը մտադիր է ցարից պահանջել զինված միջամտությամբ վերջ տալու Պարսկաստանում ծավալված հեղափոխական շարժումներին ու խռովություններին, Վորոնցով-Դաշկովը ցուցաբերում է տակտ ու հեռատեսություն, խորհուրդ տալով Նիկոլայ II-ին չդիմել նման քայլի։ «Ձեմ կարող ամենավճռական կերպով դեմ չարտահայտվել նման միջամտության, որն անկասկած կտանի դեպի իրադրության ամեն տեսակի բարդացում՝ տվյալ դեպքում խիստ անձեռնտու Ռուսաստանի և հատկապես Կովկասի համար»[22]։

Խռովություններն ու անկարգությունները Պարսկաստանում, ըստ Վորոնցով-Դաշկովի, Ռուսաստանի համար չեն կարող որևէ վտանգ ներկայացնել, ուստի գլխավոր ուշադրությունը պետք է դարձնել Թուրքիայի վրա, որ ակտիվորեն գործում են նաև գերմանացիները[23]։

Տալով ապագա կովկասյան ճակատի ու թիկունքի բարդությունների պատկերը՝ կապված տեղանքի, կլիմայի, ճանապարհների սակավության, ազգային

---

20 ЦГВИА СССР, ф. 601, оп. 1, д. 1210, Л-20 *կամ* «Красный Архив», т. 1 (XXVI), 1928 г., стр. 105.

21 Նույն տեղում, թ. 21։

22 Նույն տեղում,

23 Նույն տեղում, թ. 22։

հարաբերությունների հետ, նա ամենից առաջ խնդիր է դնում ուժեղացնել ռազմական օկրուգը։ Այդ զեկուցագրից պարզվում է, որ կովկասյան բանակն ուներ առհասարակ հետևյալ պակասավոր կողմերն ու բացերը. քիչ էին բերդային, լեռնային և դաշտային հրանոթների թիվը և նրանց արկերը։ Պակասում էին հեծյալ զորամասերը, պահեստներում խիստ անբավարար էին հրազենի և փամփուշտների ռեզերվները, համարյա բացակայում էին պահեստի մասերը ինչպես հրետանու, նույնպես և հրաձգային զենքի ասպարեզում, համարյա իսպառ բացակայում էին կապի և ինժեներական զորքերի համար անհրաժեշտ միջոցները, սանիտարական ծառայության գծով զորքերը գտնվում էին անմխիթար վիճակում։

Այս և նման կարգի լուրջ թերությունները կարճ ժամանակամիջոցում լիկվիդացնելու համար Վորոնցով-Դաշկովը խնդիր է դնում անհապաղ «ուժեղացնել Կովկասի բանակը Ռուսաստանի ներքին օկրուգների հաշվին, արագացնելու հրետանու վերազինումը նոր տեսակներով, հատկապես լեռնային հրանոթներով, համալրել պահեստներում եղած պակասները և բերդերի մարտունակությունը բարձրացնել ժամանակի պահանջներին համապատասխան։ Միայն այդպիսի պայմանով Թուրքիայի նախապատրաստությունները վտանգավոր չեն լինի, և անխուսափելի, անհրաժեշտության դեպքում կովկասյան զորքերը պատվով կպաշտպանեն Ռուսաստանի արժանապատվությունը և իրենց հին մարտական տրադիցիաները»[24]։

Չանցած մի քանի ամիս, Վորոնցով-Դաշկովը մի այլ զեկուցագրում նկարագրելով իրերի դրությունը, համառորեն խնդրում է ցարից՝ հոգալ կովկասյան բանակի կարիքները, տրամադրելով անհրաժեշտ միջոցներ (մոտ 6 միլիոն ռուբլի) Կարսի երկաթգծի կառուցման և այլ միջոցառումների համար։ Նա սպառնում է, որ եթե այժմ 6 միլիոն չծախսվի, հետագայում Թուրքերի հարձակման դեպքում 6 միլիարդով հնարավոր չի լինի փրկել դրությունը։

Արդեն 1909 թ. Վորոնցով-Դաշկովը իր գոհունակությունն է արտահայտում ցարին նրա ցույց տված օգնության համար։

Հայտնի է այն անբարյացակամ վերաբերմունքը, որ ունեին Ստոլիպինը, ռազմական մինիստր գեներալ Սուխոմլինովը և գլխավոր շտաբի պետ գեներալ Յանուշկևիչը դեպի Վորոնցով-Դաշկովը։ Չգալով նրանց կողմից հորինված արգելքները կովկասյան բանակի կարիքները բարելավելու հարցում, Վորոնցով-Դաշկովը նորից ցարին խորհուրդ է տալիս՝ եթե փոխարքան լավը չէ, կարելի է նրան փոխել, իսկ Կովկասի մասին, որպես Ռուսաստանի համար կենսական նշանակություն ունեցող երկրամասի, անպատճառ պետք է հոգալ ինչպես հարկն է[25]։

1912 թ. հոկտեմբերի 9-ին Նիկոլայ II-ին գրած զեկուցագրից պարզվում է, որ մինիստրների կաբինետի նախագահին կից խորհրդակցությունը հատուկ քննության է ենթարկել Վորոնցով-Դաշկովի միջնորդությունները կովկասյան բանակի ուժեղացման մասին։ «Չնայած ձեռք բերած արդյունքները,—գրում է փոխարքան,—չեն համապատասխանում իմ առաջարկած չափերին, այնուամենայնիվ խորհրդակցությունը հանգեց այն եզրակացության, որ կովկասյան զորքերի քանակն ավելացվի մեկ նոր կազմակերպվող կորպուսով և ուժեղացվ

24 «Красный Архив», том I (XXVI). 1928 г., стр. 112.

25 Նույն տեղում, էջ 112։

գոյություն ունեցող 3 կորպուսների կազմը»[26]։ Այդ հաջողության համար Վորոնցով-Դաշկովը հատուկ շնորհակալություն է հայտնում ցարին։

Հաշվի առնելով, որ գերագույն շտաբի պլանի համաձայն ենթադրվում էր Թուրքիայի չեզոքությունը համաեվրոպական պատերազմի դեպքում և կովկասյան բանակի 3 կորպուսներից 2-ի փոխադրումն արևմտյան ռազմաճակատ, Վորոնցով-Դաշկովը բազմիցս բողոքել է Պետերբուրգ նման ոչ ռեալիստական մոտեցման դեմ։ Նա երբեք չէր հավատում Թուրքիայի ղեկավար գործիչների կեղծ հայտարարություններին, ուստի առաջարկում էր կովկասյան բանակը ոչ թե պակասեցնել, այլ ուժեղացնել, որին նա հասավ շատ մեծ դժվարությամբ։ Երբ 1914 թ. ուշ աշնանը սկսվեցին պատերազմական գործողությունները Թուրքիայի և Ռուսաստանի միջև, չնայած երկու կորպուսներն արդեն փոխադրված էին արևմտյան ճակատ, այնուամենայնիվ նրանց փոխարեն կովկասյան ճակատ փոխադրվեցին Թուրքեստանյան 2-րդ կորպուսը և մի շարք այլ զորամասեր։

Պատերազմից առաջ կովկասյան բանակի հրամանատարության միջոցառումները իրանական Ադրբեջանում, որի հետևանքով կանխվեց Թուրքերի թևային հարձակումը Անդրկովկասի վրա, նույնպես մտածված ու իրենց արդարացնող միջոցառումներ էին։

Մենք կանգ առանք առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Մերձավոր արևելքում ցարիզմի վարած քաղաքականության ընդհանուր ոգուն համապատասխան Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի գործունեության վրա միայն երկու հարցում, որոնք, ըստ մեզ, որոշակի պատմա-գիտական հետաքրքրություն են ներկայացնում առաջին համաշխարհային պատերազմի կովկասյան ճակատի ռազմական գործողությունների ընթացքը ըմբռնելու համար։

---

26 Նույն տեղում, էջ 117. հենց նույն նամակում էլ նա նորից նշում է, որ իրեն ձանձրացրել ես Պետրոգրադի որոշ մինիստրների անվերջ դավերն ու չարակամությունները։